# Ալաշկերտ համայնքի ղեկավարի 2011 թվականի 1-ին կիսամյակի

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գ. Ալաշկերտ

Ալաշկերտ համայնքը ունենալով խաղողագործության և պտղաբուծության ուղղվածություն այս տարվա առաջին կիսամյակը ոչ բարենպաստ էր գյուղատնտեսության համար: Գարնանային ցրտահարությունները և կարկտահարությունը մեծ վնաս են հասցրել գյուղացուն, ամբողջովին կարկտահարվել են պտղատու այգիները և բանջար-բոստանային կուլտուրաները:

Չնայած այդ դժվարություններին 2011 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել է 5382,2 հազ. դրամ հողի հարկ և 887,5 հազ. դրամ գույքահարկ:

Գյուղում կային բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեին և լուծում են ստացել:

1. Հորդառատ անձրևների պատճառով ճանապարհները խիստ վերանորոգման կարիք ունեին, կատարվել են ավազապատման աշխատանքներ կենտրոնական ճանապարհներին, իսկ դաշտամիջյան ճանապարհներին հողալցման աշխատանքներ: Կենտրոնական փողոցներում կատարվել են հարթեցման աշխատանքներ:

2. Կատարվել են խմելու ջրի խողովակաշարի նորոգումներ, այժմ բնակչությանը տրվում է ջուր՝ առավոտյան $9^{00}$-ից մինչ $16^{00}$ :

3. Համայնքում պարբերաբար կատարվում է աղբաթափման աշխատանքներ /շաբաթը մեկ անգամ/ : Գյուղի սանիտարական վիճակը գտնվում է բարվոք վիճակում: Մաքրվել է հուշարձանի և գյուղապետարանի հարակից տարածքները , կատարվել է ծառատնկման աշխատանքներ:

4. Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցները գտնվել են գյուղապետարանի անմիջական ուշադրության կենտրոնում և տրվել են ֆինանսական օգնություններ, ոչ միայն վետերաններին այլ նաև համայնքի անապահով բնակիչներին:
5. Անցկացվել է 3 ավագանու նիստ, որոնք պատշաճ ժամկետներում ուղվել են մարզպետարան, իսկ բյուջեյում կատարված փոփոխությունները ուղվել Արդարադատության նախարարության փորձագիտական քննարկմանը:

6. Բնակիչներին տրվել են 300-ից ավել տեղեկանքներ և տարբեր բնույթի փաստաթղթերի պատճեններ:
7. Ժամանակին և պատշաճ կերպով զինկոմիսարիատի հետ անցկացրել ենք զինակոչիկների կցագրման աշխատանքներ:
8. Վիճվարչության հետ կազմել ենք 2011 թվականի անցկացվելիք մարդա – համարի հետ կապված նախնական ցուցակների կազմումներ: Վիճվարչություն է ներկայացվել նաև տարբեր բնույթի հաշվետվություններ, իսկ Ֆինբաժին և Գանձապետարան տարբեր բնույթի ֆինանսական հաշվետվություններ:
9. 2011 թվականի հունիսի 5-ի կարկտահարությունից տուժված շահառուների ցուցակները հանձնաժողովի հետ ճշտվել և ուղղարկվել է Մարզպետարան, իսկ բնակչությանը սահմանված կարգով բաժանվել է սերմնացու և դիզ. վառելիք:
2. Չնայած կատարված աշխատանքներին, համայնքում կան նաև չլուծված հիմնախնդիրներ.

1. Համայնքում չի գործում կուլտուրայի տունը, որը գտնվում է վթարային վիճակում:

2. Խիստ վնասված և քայքայված է խմելու ջրի ցանցը, որը ունի ամբողջովին փոփոխման կարիք:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը մասնակցում էր մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Թովմասյանը: